C. E. P. F. A.

ՖՐՄՈՒԿՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ No. 27

25.02.2025

Էրազմուսյան փոխանակումներ Լիոնում

ՍԵՊՖԱ-ի ղեկավար, դասախոսական և ուսանողական կազմի ներկայացուցիչները մեկնեցին Ֆրանսիայի Լիոն քաղաք՝ մասնակցելու Էրազմուս+ IMPROVET_AM ծրագրի շրջանակներում կրթական և մասնագիտական փոխանակումների ծրագրերին: ՍԵՊՖԱ-ի տնօրեն Գոհար Գրիգորյանը և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության դասավանդողներ Լիլիթ Պապյանը և Էրիկ Սարգսյանը Ֆրանսիայի Լիոն քաղաքում իրականացրեցին ակտիվ մասնագիտական փոխանակումներ: Ղեկավար անձնակազմի համար նախատեսված էին փոխանակումներ ուսումնական գործընթացում

թվայնացման ռազմավարության, ֆինանսավորման /ներդրումների/, անվտանգության և մի շարք այլ կարևոր թեմաների շուրջ: Մեր ուսանողներ Անուշ Պետրոսյանը, Արտյոմ Պետրոսյանը և Սարո Գրիգորյանը հնարավորություն ունեցան այցելել Լիոն քաղաքում գտնվող ՍԵՊՌ կամպուս, որտեղ ակտիվորեն մասնակցեցին մասնագիտական փոխանակումների, կատարեցին գործնական աշխատանքներ, համատեղ դասերի՝ հարստացնելով իրենց գիտելիքները և փորձառությունը: Ապագա ատամնատեխնիկներին հնարավորություն ընձեռվեց նաև այցելել ոլորտի առաջատար լաբորատորիաներ, ծանոթանալ ատամնատեխնիկության մեջ կիրառվող նորագույն տեխնոլոգիաներին և մեթոդներին: Տեղի ունեցավ նաև շրջայց լաբորատորիաներում, ժամանակակից ատամնատեխնիկական տեխնոլոգիաների և նորարարական մեթոդների ուսումնասիրություն: Այցի շրջանակում մեր պատվիրակները մշակութային այցելություններ կատարեցին Ֆրանսիայի հարուստ պատմություն և մշակութային ժառանգություն ունեցող վայրերում:

Էրազմուսյան օրեր Իտալիայում

Էրազմուս+ IMPROVET_AM ծրագրի շրջանակներում իրականացվող փոխանակումների հերթական փուլը տեղի ունեցավ Իտալիայի Ալբա քաղաքում, որին մասնակցում էին տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Ելենա Մարտիրոսյանը և հոգեբան Աշխեն Ասլանյանը: Օրակարգը հագեցած էր. առողջապահության ոլորտի օգնականների վերապատրաստում՝ ուսանողների ընդունելության և ավարտական քննությունների կազմակերպման նպատակով,

հանդիպում Casa Maria Rosa բնակելի համայնքի և Cooperativa Sociale Progetto Emmaus սոցիալական կոոպերատիվի մասնագետների հետ՝ հաշմանդամություն և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի մեթոդների կիրառման համար, խնդիրների լուծում՝ իրական դեպքի ուսումնասիրություն իրականացնելու առումով (ավարտական քննության առաջադրանք): Այցելություն կազմակերպվեց նաև ԱՊՌՈ Ֆորմացիոնե ուսումնական կենտրոնի առողջապահական լաբորատորիա, որտեղ ՍԵՊՖԱ-ի ներկայացուցիչները ծանոթացան կենտրոնի նորագույն սարքավորումներին և ուսուցման տեխնոլոգիաներին. դրանք օգտագործվում են առողջապահության ոլորտի ուսումնական գործընթացում: Տեղի ունեցավ զրույց և քննարկում կարիերայի

հնարավորությունների, մասնավորապես՝ աշխատանքի տեղավորման համար անհրաժեշտ հմտությունների և որակավորման մասին, ինչպես նաև կայուն զարգացում, թափոնների կրճատում, էկոլոգիական հետք թեմաներով:
Քննարկվեցին նաև առողջապահական օգնականի կրթական ծրագիրն ու կարևոր հանդիպում տեղի ունեցավ Piedmont տարածաշրջանի առողջապահական ոլորտի ղեկավար Թերեզա Վալենտինոյի հետ:

ՄԱԶԾ պատվիրակության այցը

Ֆրանսիայի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների պատվիրակությունը, որի կազմում էին նաև ՍԵՊՖԱ-ի ՀԽ անդամ,Լիոնի փոխքաղաքապետ Սոնիա Զդորովցոֆֆը այցելեցին ՍԵՊՖԱ, ծանոթացան կենտրոնի ծավալած գործունեությանը: Նշենք, որ պատվիրակությունը Հայաստան էր ժամանել ՄԱԶԾ «Աջակցություն Արարատի և Արմավիրի մարզերի փախստականներին և ընդունող համայնքներին» ծրագրի շրջանակում: Այցի ընթացքում պաշտոնական հանդիպումներ տեղի ունեցան նախարարությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ՝ տեղական համայն-

քների հետ կապեր հաստատելու, փորձի փոխանակման, ինչպես նաև փախստականների սոցիալ-տնտեսական ինտեգրման և աջակցության ոլորտում հնարավոր համագործակցության շրջանակը քննարկելու նպատակով:

Գերազանցությունը հասանելի դարձնել բոլոր սովորողների համար

Գերազանցությունը հասանելի դարձնել բոլոր սովորողների համար՞ խորագիրը կրող համաժողովը Իտալիայի Թուրին քաղաքում համախմբել էր Եվրոպական կրթական հիմնադրամի (ETF) Գերազանցության կենտրոնների ցանցի (ENE) անդամ պետությունների ներկայացուցիչներին:
Համաժողովին մասնակցում էր ՍԵՊՖԱ-ի տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Ելենա Մարտիրոսյանը:
Գերազանցության կենտրոնների ցանցը ստեղծվել է 2020 թվականին: Այժմ նրան անդամակցում են ավելի քան 300

կազմակերպություններ 54 երկրներից, այդ թվում նաև ՍԵՊՖԱ-ն: Համաժողովի քննարկման հարցերն էին գերազանցության կենտրոնների (CoVE) դերը ՄԿՈՒ համակարգում և նրանց միջազգայնացումը, ինչպես նաև գերազանցության կենտրոնների հզորացմանը նպաստող ISAT-COVE (գերազանցության կենտրոնների ներքին գնահատման գործիք) առցանց հարթակի կիրառումը:

Համաժողովի ընթացքում ելույթով հանդես եկավ նաև ՍԵՊՌ կամպուսի գլխավոր տնօրեն Օրիան Ռեյնոն, ով իր խոսքում հիշատակեց ՍԵՊՖԱ-ի հետ պատմական համագործակցության հաջողված փորձը:

Մասնակցություն մասնագիտական կրթության գերազանցության առաջին ձմեռային միջազգային ճամբարին

ՍԵՊՖԱ-ի որակի ապահովման պատասխանատու Ամիդա Դաբաղյանը աշխարհի 22 երկրների գերազանցության կենտրոնների 40 ներկայացուցիչների հետ Սլովենիայի Նովա Գորիցա քաղաքում էր՝ մասնագիտական կրթության գերազանցության առաջին ձմեռային միջազգային ճամբարին մասնակցելու նպատակով: Բացի դասավանդում և ուսումնառություն՝ կրթական ժամանակակից մոտեցումներ թեմայից քննարկումից, օրակարգում էին գործընկերություն և համագործակցություն՝ ամուր գործընկերային կապեր նպատակների իրականացման թեմաները, ինչպես նաև կառավարում և ֆինանսավորումը՝ կայուն գործիքներ և միջոցներ գերազանցության հասնելու նպատակով: Վերջում տեղի ունեցավ ISATCOVE ինքնագնահատման գործիքի կիրառում, արդյունքների ամփոփում և զարգացման պլանի մշակում: Միջոցառումը կազմակերպվել էր ETF կողմից՝ EfVET, EVTA և EVBB կազմակերպությունների աջակցությամբ Նովա Գորիցայի ուսումնական կենտրոնում

Հրաշալի նորությունների շարքից

ՍԵՊՖԱ-ի հերթական հաջողություններից. Եվրոպական կրթական հիմնադրամի (ETF) կողմից մեր ուսումնական հաստատությունը ստացել է «Commitment to Vocational Excellence» վկայականը, ինչը հաստատում է մեր նվիրվածությունը մասնագիտական կրթության որակի բարձրացմանը և զարգացմանը:

Ավարտվեց առաջին փուլը

Ֆրանսիական զարգացման գործակալության (AFD), Եվրոպայի և արտաքին գործերի նախարարության (MEAE), Ժողովրդական կրթության և երիտասարդության հիմնադրամի (FONJEP) և ֆրանսիական որոշ համայնքների կողմից ֆինանսավորվող «Հայաստանի արահետներ» ծրագրի շրջանակում իրականացվող քայլարշավային ուղեկցորդների դասավանդող դառնալու առաջին դասընթացի մասնակիցները ստացան իրենց հավաստագրերը: 90 ժամ տևողությամբ եռափուլ դասընթացի ժամանակ մասնակիցները ուսումնասիրեցին բազմաթիվ թեմաներ, այդ թվում՝ խմբի առաջնորդում, անվտանգություն և առաջին օգնություն, օդերևութաբանություն, մանկավարժություն և հոգեբանություն, գոյատևում ձնառատ տեղանքում և

փրկարարություն: Դասընթացը մասնակիցների համար վարեց ԱՖՐԱՏ ուսումնական կենտրոնի դասավանդող, բարձր լեռնային գիդ Լիոնել Կոնֆորը:

Հերթական «Մանկավարժական սրճարան» հանդիպումը ՍԵՊՖԱ-ում

Համտեսելով մեր հրուշակագործների պատրաստած համեղ քաղցրավենիքները և վայելելով մի գավաթ սուրճ՝ մեր դասավանդող թիմը ունեցավ հետաքրքիր քննարկումներ և փոխանակումներ գնահատման նոր մեթոդների, առցանց ուսումնական գործիքների, կայուն զարգացման թեմատիկայի շուրջ:

Արեգ Գևորգյանը կիսվեց իր փորձով

ՍԵՊՖԱ-ի «Խոհարարական գործ» և «Հրուշակեղենի տեխնոլոգիա» մասնագիտությունների ուսանողները հանդիպեցին «Քամանչա» ռեստորանի տնօրեն Արեգ Գևորգյանի հետ: Հանդիպման ընթացքում ուսանողները ստացան ոլորտի և հյուրի աշխատանքային ուղուն առնչվող հարցերի պատասխանները: Արեգ Գևորգյանը հորդորեց երիտասարդներին երազել, չվախենալ ռիսկերից և հավատալ սեփական գործի հաջողությանը:

Հանդիպում ՍԵՊՖԱ-ի էկո ակումբի շրջանակում

ԿԱԶԱ հիմնադրամի՝ TNAC youth Center -ի և Solution HUB-ի հիմնադիր Լուսինե Կարապետյանը ՍԵՊՖԱ-ի ուսանողների հետ կիսվեց իր փորձով և պատմեց էկո գործունեության, էկոմտածողության կարևորության, կայուն զարգացման և հասարակական պատասխանատվության մասին: Նա հորդորեց շարունակել էկո-կրթության ու գիտակցության բարձրացման մեր ճանապարհը:

Հաղթողները պարգևատրվեցին

ՍԵՊՖԱ-ի ամանորյա ներկայացումը նախորդ տարի յուրահատուկ էր. ուսանողները մի փոքրիկ ներկայացմամբ ներկաներին տեղափոխեցին հայկական և ֆրանսիական գյուղեր: Ամանորյա մրցույթ-

միջոցառման հաղթող թիմը կարողացավ վայելել իր արժանի մրցանակը՝ հնարավորություն՝ դիտելու Պ.Չայկովսկու հիանալի «Մարդուկ-ջարդուկ» բալետը՝ լցված հեքիաթային երաժշտությամբ և գունավոր պարային ներկայացումներով: Հաղթողներին ուղեկցում էին միջոցառման ստեղծագործական և կազմակերպչական թիմի անդամները, ովքեր նույնպես վայելեցին այս հիասքանչ երեկոն՝ արժևորելով համատեղ աշխատանքի արդյունքները:

Գրքի ու գրականության շուրջ

Գրքի տոնին նվիրված միջոցառման ընթացքում ուսանողները ներկայացրեցին իրենց կարդացած գրքերը՝ պատմելով ապրած զգացողությունների, հույզերի և ստացած տպավորությունների մասին, ցուցադրեցին գրքերի բովանդակությունն ու հիմնական գաղափարները արտահայտող պաստառներ:



ՍԵՊՖԱ-ում նշվեց Տյառնընդառաջի տոնը

ՍԵՊՖԱ-ում նշվեց Տեառնընդառաջի տոնը: Տոնի խորհուրդի մասին խոսեցին ուսանողները, հրուշակագործ ուսանողները հյուրասիրեցին իրենց ձեռքով պատրաստական ավանդական քաղցրավենիքները: Վերջում խարույկի շուրջ շուրջպար բռնեցին: